Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության
իրավաբանական վարչության դիմումների
և բողոքների քննության բաժնի պետ
Լ. Զաքարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2025 թվականի մարտի 6-ը ընկած ժամանակահատվածում **իմ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ Դիանա Գրիգորյանիս** կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝

1.Օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ որպես վերադաս վարչական մարմին, վերադասության կարգով իրականացրել եմ բողոքարկման վարույթներ՝ վերանայելով Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից կայացված վարչական ակտերի, գործողությունների (անգործության) իրավաչափությունը:

2.Բողոքարկման վարույթի շրջանակներում օրենքով սահմանված կարգով ապահովել եմ բողոք բերող անձանց լսված լինելու իրավունքը, միաժամանակ, ըստ անհրաժեշտության վարույթում ներգրավվել եմ երրորդ անձանց, այդ թվում՝ ոստիկանության ծառայողներին և ապահովել վերջիններիս լսված լինելու իրավունքը:

3.Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրավաչափ վարչական ակտեր կայացնելու նպատակով պատրաստել եմ գրություններ՝ հասցեագրված ՀՀ պետական մարմիններին:

4.Բողոքարկման վարույթներ եմ իրականացրել, որոնք կապված են եղել կամ վարչական ակտերի վիճարկման, կամ ոստիկանության ծառայողի գործողությունների (անգործության) իրավաչափության վերաբերյալ:

5.Նշված ժամանակահատվածում թվով 90 վարույթներ եմ իրականացրել, որի շրջանակներում, կապված գործի առանձնահատկություններից, կայացրել եմ և՛ բողոքը մերժելու, և՛ բավարարելու, և՛ կարճման, և՛ առանց քննարկման թողնելու որոշումներ, ինչպես նաև հարուցված վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշումներ:

6.Նշված ժամանակահատվածում իրականացրել եմ նաև քաղաքացիների դիմումների, բողոքների և առարկությունների քննարկում, սահմանված կարգով և ժամկետներում իմ կողմից տրվել են պատասխաններ:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ *Դիանա Գրիգորյան*

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ _____

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի պետ *Լիլիթ Զաքարյան*

06.02.2025թ.